

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՍՄ-ԳՀԱՇՁԲ-2017/4ՆԱ**

ք. Կապան

«22» դեկտեմբեր 2017թ.

Սյունիքի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյանի, ով գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), միկրոմից, և «<Սկիզբ և ապագա>> ԱՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Հարությունյանի ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շինարարական աշխատանքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 476000 (չորս հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցներով Կատարողի հաշվառության հաշվին՝ լիցենզիայի միջոցով: Դրամական միջոցների լիցենզիայի

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսերին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերի միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է ՀՀ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:


7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
աշխատակազմ  
Ք. Կապան, Գ. Նժդեհ 1  
Հ/Հ՝ 900311080049  
ՀՎՀՀ՝ 09415375  
Երևանի թիվ 1 ԳԲ  
Աշխատակազմի ղեկավար՝  
Ռ. Սարգսյան


(ստորագրություն)



### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Սկիզբ և ապագա» ՍՊԸ  
Սյունիքի մարզ, ք. Կապան,  
Դավիթ Բեկի 8/20  
Հ/Հ՝ 241070002027  
ՀՎՀՀ՝ 09418306  
Տնօրեն՝ Վ. Հարությունյան

(ստորագրություն)



Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել օրենսդրությանը չհակասող դրույթներ:

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

«Սյունիք»

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Աշխատանքի					կատարման	
		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/«Սյունիք» դրամ	ընդհանուր գինը/«Սյունիք» դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը՝
1	71241200/3	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ տանող կամուրջի և ճանապարհի վերանորոգում	հատ	149000	149000	1	«Սյունիքի մարզ, ք. Կապան	15.12.2017թ
2	71241200/3	«Սյունիքի մարզի Վարդավանք համայնքի ակումբի շենքի վերանորոգում	հատ	89000	89000	1	«Սյունիքի մարզ, գ. Վարդավանք	15.12.2017թ
3	71241200/3	«Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի խմելու ջրագծի կառուցում	հատ	149000	149000	1	«Սյունիքի մարզ, գ. Եղվարդ	15.12.2017թ
4	71241200/3	Շաքի համայնքի մանկապարտեզի հատակների վերանորոգում	հատ	89000	89000	1	«Սյունիքի մարզ, Գ. Շաքի	15.12.2017թ

## Չափաբաժին 1

<b>«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ տանող կամուրջի և ճանապարհի վերանորոգման նախագծային աշխատանքներ</b>	
<b>Ծրագրի անվանումը</b>	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ տանող կամուրջի և ճանապարհի վերանորոգում
<b>Ֆինանսավորման աղբյուր</b>	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ տանող կամուրջի և ճանապարհի վերանորոգում
<b>Պատվիրատու</b>	«Սյունիքի մարզպետարան
<b>Աշխատանքների անվանումը</b>	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ տանող կամուրջի և ճանապարհի վերանորոգման նախագծային աշխատանքներ
<b>Ճանապարհի անվանումը</b>	Մ-2-- նյարդահոգեբուժական դիսպանսեր
<b>Աշխատանքի տեսակը</b>	Վերականգնում
<b>Նախագծման փուլը</b>	Աշխատանքային նախագիծ

## **Ընդհանուր դրույթներ**

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթեռնելի:

## **Հիմնական պարտականություններ և պահանջներ**

### **Հիմնական պարտականություններ՝**

1. հետազննման աշխատանքների իրականացում,
2. նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում,

### **Հետազննման վերաբերյալ պահանջներ՝**

- հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,
- հետազննման ընթացքում իրականացնել վերակառուցվող կամրջի առկա վիճակի տեսանկարահանում:

### **Նախագծի նկատմամբ պահանջներ**

- Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին:
- Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝
  - ✓ Կամրջին հարող ճանապարհի հողային պաստառի վերականգնում 5.0մ լայնությամբ ,
  - ✓ Կամրջի երթևեկելի մասի լայնությունը նախատեսել 5.3 մ,
  - ✓ ջրահեռացման համակարգը նախատեսել կողային առուների միջոցով
  - ✓ ճանապարհի կահավորում մեքսիկական արգելափակոցի տեսքով
  - ✓ անվտանգության նշանների տեղադրում:

### **Նախագծի կազմի նկատմամբ պահանջներ՝**

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն համաձայն ГОСТ 21.511-83-ի և ներառեն ոչ պակաս քան ստորև նշվածը՝
  - ✓ բացատրագիր (որն իր մեջ կներառի կամրջի և նրան հարող հատվածն ընդգրկող տեղամասի վիճակի հետազննման արդյունքները, քարտեզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ և նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենամեխանիզմների և ինժեներատեխնիկական մասնագիտական խմբի կազմերը),
  - ✓ ինժեներակառուցական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելիեֆի, բնահողերի տեսակները տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի վերաբերյալ),
  - ✓ վերականգնվող կամրջի լայնական և երկայնական կտրվածքներ,
  - ✓ գծագրեր (որոնք կներառեն կամրջին հարող ճանապարհի հողային պաստառի տրախտոմետրական հանույթի հատկագիծը,

- ճանապարհահատվածի երկայնական և լայնական կտրվածքները, կահավորման հատակագիծը և այլն),
- ✓ գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող ջրահեռացման համակարգի կողային առուների, ճանապարհի կահավորման մեկտրական արգելափակոցի, երթևեկության կազմակերպման սխեմաներ, և այլն),
- ✓ ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքների՝ ըստ գրունտների կարգի, դրանց մշակման, տեղափոխման մեխանիզմների և աշխատանքի տեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըստ ծածկի կոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կահավորման՝ ըստ աշխատանքի տեսակի, անվտանգության տարրերի՝ ըստ աշխատանքի տեսակի ամփոփագրեր),
- ✓ համահավաք ամփոփագրեր
  - ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),
  - ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ)

**Համաձայնեցումներ՝**

- քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,
- նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ,
- համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ,
- տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,

**Նորմատիվային պահանջներ**

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ԴՕՇՏ 21.511-83-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի:

**Աշխատանքի կատարման ժամկետը**

սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 3-րդ օրացուցային օրը ներառյալ:



## Չափարածին 2

**ՀՀ Սյունիքի մարզի Վարդավանք համայնքի ակումբի շենքի վերանորոգման նախագծային աշխատանքներ**

**Ծրագրի անվանումը** ՀՀ Սյունիքի մարզի Վարդավանք համայնքի ակումբի շենքի վերանորոգում

**Ցինանսավորման աղբյուր** ՀՀ կառավարության 24.08.2017թ N 1070-Ն որոշում

**Պատվիրատու** ՀՀ Սյունիքի մարզպետարան

**Աշխատանքների անվանումը** ՀՀ Սյունիքի մարզի Վարդավանք համայնքի ակումբի շենքի վերանորոգման նախագծային աշխատանքներ

**Աշխատանքի տեսակը** Հիմնանորոգում

**Նախագծման փուլը** Աշխատանքային նախագիծ

**Ընդհանուր դրույթներ**

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթեռնելի:

**Հիմնական պարտականություններ և պահանջներ**

**Հիմնական պարտականություններ՝**  
 1 հետազննման աշխատանքների իրականացում,  
 2.նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում,

**Հետազննման վերաբերյալ պահանջներ՝**

- հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,
- հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող օբեկտի առկա վիճակի տեսանկարահանում:

**Նախագծի նկարմամբ պահանջներ**

- Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, նորմերին և ԳՈՍՏ-ի պահանջներին:
- ✓ Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝ *Տանիքածածկույթի փոխում*,
- ✓ *Դռների և պարուհանների փոխում*
- ✓ *նոր էլեկտրահամակարգի մոնտաժում*
- ✓ *փայտյա հատակների փոխում*
- ✓ *ներքին հարդարման աշխատանքներ*
- ✓ *տարածքի բարեկարգում:*

✓ **Նախագծի կազմի նկարմամբ պահանջներ՝**  
 Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն՝

- ✓ Ելակետային տվյալներ՝ ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներ,
- ✓ Չափագրություններ

- ✓ Բացատրագրեր
- ✓ Ճարտարապետաշինարարական մաս, կոնստրուկտորական մաս, ներքին ինժեներական ցանցերի գծագրեր
- ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ)
- ✓ Շինարարության կազմակերպման նախագիծ
- ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),

**• Համաձայնեցումներ՝**

- քաղաքաշինական փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,
- նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ,
- տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,

**Նորմատիվային պահանջներ**

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի:

**Աշխատանքի կատարման ժամկետը**

սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 3-րդ օրացուցային օրը ներառյալ:

### Չափարածին 3

#### «Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի խմելու ջրագծի կառուցման նախագծային աշխատանքներ»

**Ծրագրի անվանումը**

«Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի խմելու ջրագծի կառուցում»

**Ֆինանսավորման աղբյուր**

«Կառավարության 24.08.2017թ N 1070-Ն որոշում»

**Պատվիրատու**

«Սյունիքի մարզպետարան»

**Աշխատանքների անվանումը**

«Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի խմելու ջրագծի կառուցման նախագծային աշխատանքներ»

**Աշխատանքի տեսակը**

Հիմնանորոգում

**Նախագծման փուլը**

Աշխատանքային նախագիծ

**Ընդհանուր դրույթներ**

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել «Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի խմելու ջրագծի կառուցման նախագծային աշխատանքներ» կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի խմելու ջրագծի կառուցման նախագծային աշխատանքների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և «Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի խմելու ջրագծի կառուցման նախագծային աշխատանքներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան:
- Նախահաշիվը կազմել «Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի խմելու ջրագծի կառուցման նախագծային աշխատանքներ» կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթեռնելի:

**Հիմնական պարտականություններ և պահանջներ**

**Հիմնական պարտականություններ՝**

1. հետազննման աշխատանքների իրականացում,
2. նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում,

**Հետազննման վերաբերյալ պահանջներ՝**

- հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,
- հետազննման ընթացքում իրականացնել կառուցվող օբյեկտի վիճակի տեսանկարահանում:

**Նախագծի նկարմամբ պահանջներ**

- Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն «Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի խմելու ջրագծի կառուցման նախագծային աշխատանքներ» կառավարության 24.08.2017թ N 1070-Ն որոշմանը:
- Նախագծի մեջ պետք է նախատեսվի առնվազն հետևյալ աշխատանքները՝
  - ✓ խրամուղու փորում,
  - ✓ խողովակաշարի անցկացում,
  - ✓ պոմպակայանի կառուցում,
  - ✓ նոր էլեկտրահամակարգի մոնտաժում

**Նախագծի կազմի նկարմամբ պահանջներ՝**

- ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներառեն՝
- ✓ Ելակետային տվյալներ՝ ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներ,
- ✓ Չափագրություններ
- ✓ Բացատրագրեր
- ✓ Ճարտարապետաշինարարական մաս, կոնստրուկտորական մաս,
- ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ)
- ✓ Շինարարության կազմակերպման նախագիծ
- ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր փութերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),

**Համաձայնեցումներ՝**

- քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,
- նախագծային լուծումները համաձայնեցնել համայնքի ղեկավարի հետ,
- տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը

**Նորմատիվային պահանջներ**

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի:

**Աշխատանքի կատարման ժամկետը**

սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 3-րդ օրացուցային օրը ներառյալ:

## Չափարածին 4

Շաքի համայնքի մանկապարտեզի հատակների վերանորոգման նախագծային աշխատանքներ

**Ծրագրի անվանումը**

Շաքի համայնքի մանկապարտեզի հատակների վերանորոգում

**Ֆինանսավորման աղբյուր**

«Կառավարության 24.08.2017թ N 1070-Ն որոշում

**Պարավիրարու**

«Սյունիքի մարզպետարան

**Աշխատանքների անվանումը**

Շաքի համայնքի մանկապարտեզի հատակների վերանորոգման նախագծային աշխատանքներ

**Աշխատանքի տեսակը**

Վերականգնում

**Նախագծման փուլը**

Աշխատանքային նախագիծ

**Ընդհանուր դրույթներ**

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել «Կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և «Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան:
- Նախահաշիվը կազմել «Կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթեռնելի:

**Հիմնական պարտականություններ և պահանջներ**

**Հիմնական պարտականություններ՝**

1. հետազննման աշխատանքների իրականացում,
2. նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում,

**Հետազննման վերաբերյալ պահանջներ՝**

- հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,
- հետազննման ընթացքում իրականացնել վերականգնվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:

**Նախագծի նկարմամբ պահանջներ**

- Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն «Կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման» պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին:
- Նախագծում նախատեսել հետևյալ աշխատանքները՝
  - Մանկապարտեզի հատակների փոխում:
  - արտաքին և ներքին դռների, պատուհանների փոխարինում
  - Ներքին հարդարման աշխատանքներ (պատերի, առաստաղների հարդարում)

**Նախագծի կազմի նկարմամբ պահանջներ՝**

- Նախագծանախահաշվային փաստաթղթերում ներառել
  - Ելակետային տվյալներ՝ ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներ,

- ✓ Չափագրություններ
- ✓ Բացատրագրեր
- ✓ Ճարտարապետաշինարարական մաս կոնստրուկտորական մաս,
- ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ)
- ✓ Շինարարության կազմակերպման նախագիծ
- ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր փուլերը, վճարները և հարկերը՝ առանց նախադեմով վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախադեմով աշխատանքների և ծախսերի 50%),

**Համաձայնեցումներ՝**

- քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,
- նախագծային լուծումները համաձայնեցնել համայնքի ղեկավարի հետ,
- տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,

**Նորմատիվային պահանջներ**

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ГОСТ 21.511-83-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի:

**Աշխատանքի կատարման ժամկետը**

սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 3-րդ օրացուցային օրը ներառյալ:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

ՀՀՍյունիքի մարզպետարանի  
աշխատակազմ  
Ք. Կապան, Գ. Նժդեհ 1  
Հ/Հ՝ 900311080049  
ՀՎՀՀ՝ 09415375  
Երևանի թիվ 1 ԳԲ  
Աշխատակազմի ղեկավար՝  
Ռ. Սարգսյան


(ստորագրողը)



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Սկիզբ և ավարտ» ՍՊԸ  
Սյունիքի մարզ, ք. Կապան,  
Դավիթ Բեկի 8/20  
Հ/Հ՝ 241070002027  
ՀՎՀՀ՝ 09418306  
Տնօրեն՝ Վ. Հարությունյան

(ստորագրողը)



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

« Պրամ

Աշխատանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**															
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը			
1	71241200/3	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ տանող կամուրջի և ճանապարհի վերանորոգում	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	149000	149000
2	71241200/3	«Սյունիքի մարզի Վարդավանք համայնքի ակումբի շենքի վերանորոգում	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	89000	89000
3	71241200/3	«Սյունիքի մարզի Եղվարդ համայնքի խմելու ջրագծի կառուցում	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	149000	149000
4	71241200/3	Շաքի համայնքի մանկապարտեզի հատակների վերանորոգում	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	89000	89000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Սյունիքի մարզպետարանի  
 աշխատակազմ  
 Բ. Կապան, Գ. Նժդեհ 1  
 Հ/Հ՝ 900311080049  
 ՀՎՀՀ՝ 09415375,  
 Երևանի թիվ 1 ԳԲ  
 Աշխատակազմի ղեկավար՝  
 Ռ. Սարգսյան


(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Սկիզբ և ապագա» ՍՊԸ  
 Սյունիքի մարզ, ք. Կապան,  
 Դավիթ Բեկի 8/20  
 Հ/Հ՝ 241070002027  
 ՀՎՀՀ՝ 09418306  
 Տնօրեն՝ Վ. Հարությունյան

(ստորագրություն)



Պայմանագրի կողմ

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

հվհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

հվհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՄՆԱՆ**

«    » «    »    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ \_\_\_\_\_  
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_  
 Պատվիրատուն՝ ի դեմս \_\_\_\_\_ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս \_\_\_\_\_, հիմք ընդունելով  
 Պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած  
 ներկայացուցչի N \_\_\_\_\_ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված  
 աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման  
 ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Կատարված աշխատանքի				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճար ան ժամկե տը /ըստ վճար ան ժամա ակաց յցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը  
 հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքն ընդունեց

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

Կ.Տ.

Կ.Տ.



ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը  
 (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը  
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
 նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն